

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

08.05.2014

Հարգելի հայրենակիցներ:

Անցած դարի ընթացքում Մայիսի 9-ը երկու անգամ հայ ժողովրդի կյանքում հռչակվեց որպես Հաղթանակի օր: Պատմական այդ երկու անգնահատելի հաղթանակները հայ ժողովուրդը գերմանաֆաշիստական հորդաների եւ ադրբեջանական մինչեւ ատամները զինված բանակային կազմավորումների դեմ կռեց հարյուր հազարավոր հերոս հայորդիների կյանքի ու արյան գնով՝ ապահովելով մեր սրբազան հողի համար տեւական խաղաղություն եւ ազատ ու ստեղծագործ Հայաստան կերտելու հնարավորություն: Մեր հերոս հայրերն ու եղբայրները թե՛ Հայրենական մեծ պատերազմի ռազմադաշտերում, թե՛ Արցախյան գոյամարտում ցուցաբերեցին արիության ու անձնագոհության փայլուն օրինակներ՝ հաղթականորեն դուրս գալով մեզ պարտադրված ծանրագույն ու արյունալի պատերազմներից: Իսկ այժմ հայ սերունդների խնդիրն է՝ ոգեշնչվել այդ հաղթանակներով, սրբորեն պաշտպանել եւ անդադրում կառուցել Հայոց հայրենիքը:

Մայիսյան հաղթանակների տոնի կապակցությամբ շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի հայությանը, ցանկանում խաղաղ ու երջանիկ ժամանակներ, քաջառողջություն, հաջողություններ ու ձեռքբերումներ ընտանիքում եւ անձնական կյանքում, նորանոր նվաճումներ՝ հայրենաշինության եւ հայրենիքի պաշտպանության վեհ գործերում:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան